County of Los Angeles
DEPARTMENT OF
PUBLIC SOCIAL SERVICES

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ՄԱՐԶԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ/ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ

Հանրային սոցիալական ծառայությունների վարչությունը (DPSS) ձգտում է խթանել փոխադարձ հարգանքի մշակույթը հաճախորդների և աշխատակազմի միջև: DPSS-ը պարտավորվում է ստեղծել անվտանգ և ապահով միջավայր իր աշխատակիցների, անվտանգության անձնակազմի և այցելուների համար: Ցանկացած անձ, ով մուտք է գործում կամ զանգահարում է DPSS-ի հաստատություն, չպետք է խախտի, խանգարի կամ ֆիզիկապես խոչընդոտի DPSS-ի աշխատակիցների պաշտոնական աշխատանքի և պարտականությունների կատարմանը:

Յուրաքանչյուր ոք, ով մուտք է գործում կամ զանգահարում է DPSS-ի հաստատություն և ցուցաբերում է հետևյալ հասարակական կարգը խախտող վարքագիծը, կարող է այդ օրը հեռացվել գրասենյակից կամ նրա զանգը դադարեցվել, նույնիսկ եթե նա չի ավարտել իր գործը: Նման իրավիճակներում հաճախորդին/այցելուին կառաջարկվեն այլընտրանքային տարբերակներ, ինչպիսիք են Հաճախորդների սպասարկման կենտրոն զանգահարելը և BenefitsCal-ի առցանց ծառայությունները:

Հասարակական կարգը խախտող վարքագծեր են

- Սպառնալիքներ հնչեցնելը (բանավոր/ոչ բանավոր),
- Անպարկեշտ լեզվի օգտագործումը,
- Անպարկեշտ ժեստերի ցուցադրումը աշխատակիցների կամ այլ այցելուների նկատմամբ,
- Աշխատակիցներին կամ այլ այցելուներին հարվածելը կամ հարվածելու փորձը,
- Կռվելը կամ իրեր նետելը,
- Թքելը, մարմնական հեղուկներ նետելը, ոտքերով հարվածելը, կծելը կամ ցանկացած տեսակի նմանատիպ հարձակողական վարքագիծ դրսևորելը,
- Աշխատակիցների կամ այցելուների լուսանկարելը կամ ձայնագրելը,
- Արգելված տարածքներ մուտք գործելը կամ մուտք գործելու փորձը,
- Մարզին պատկանող գույքի ոչնչացումը կամ փսաումը,
- Այլ անձի(անց) դիպչելը առանց նրանց թույլտվության, կամ
- Աշխատակիցների, անվտանգության աշխատակազմի կամ այլ այցելուների ազատ տեղաշարժին խոչընդոտելը:

Վարքագծի կանոնակարգի խախտումների հնարավոր պատժամիջոցներ

Դիտավորյալ կամ կրկնվող հասարակական կարգը խախտող վարքագիծը, որն արգելված է օրենքով կամ խախտում է վարքագծի կանոնակարգը, կարող է հանգեցնել հետևյալ հետևանքներից մեկին (1) կամ մի քանիսին.

- բանավոր նախազգուշացումից հետո չենթարկվելը կարող է հանգեցնել այն բանին, որ օրվա մսացած մասը ձեզ կխնդրեն հեռանալ կամ դադարեցնել զանգը:
- իրավապահ մարմինների միջամտությունը, ներառյալ հնարավոր ձերբակալությունը և քաղաքացիական կամ քրեական պատժամիջոցները: Քրեական օրենսգրքի 422 (a), 594 (a), և 602.1 (b) հոդվածներ

ARMENIAN